

ուսիսիս և արգաւանդահող, լցեալ ամե- նատեսակ բերովք ուտողոց Հայաստա- նեայց աշխարհի և անուշահամ ջրովք . գտանին 'ի լերինս նորա և էրէք և վայ- րի գազանք : Առողջարար է օգ երկրին և մաքուր . և բնակիչքն են կորձալե- զուք , բայց քաղաքավարք և հիւրամե- ծարք . զնոյն լեզու բարբառին զոր միան- գամ առնուն 'ի կիր ամենայն լեռնա- կանք վայրացն :

Աշխանք (կիտալ) բազումք գտանին 'ի գաւառսն այնոսիկ յաղպէ Արաց՝ յորոց երևելին է՝ մեծ իշխանն 'Սադիան՝ զոր և պատմագիրք մեր յիշատակէն ու- րէք , և ունի զբազում արտօնութիւնս 'ի կայսերէն Առուսաց . քանզի կարէ ինք- նագլուխ ձեռնամուխ լինել 'ի մեծամեծ իրս , և սրատերազմունս անգամ ընդ մերձակայ լեռնականսն մղել , և երկու- տասան հազար տունք կան նմա 'ի ստրկութիւն ծառայութեան , որք են առ հասարակ յաղպէ Արաց , թէպէտ և գտանին իսկ ոմանք 'ի մերոյն և 'ի Հրէից : Ունի զանմատոյց ամրոցս և բերդս և թնդանօթս և քաղաքապիւղս , և ուր գտանին զոնէ երկու կրպակք վաճառաց՝ հարկ է զի գտանիցի անդ որ 'ի մերազգեաց , քանզի և վաճառա- կանութիւն երկրին ըստ մեծի մասին 'ի ձեռս Հայոց և Հրէից է :

Բնակիչք երկրին հասարակօրէն են ուժեղք , բարձրահասակք , յաղթան- զամք և յաջողակք , որպէս 'ի պատե- րազմունս՝ նոյնպէս և 'ի մշակութիւնս . հնազանդք են տեարց իւրեանց մա- հուամբ չափ , քանզի եթէ հրամայեսցէ ոմն 'ի մեծամեծաց ծառայից իւրոց հար- կանել զմերձակայն իւր , առանց իմա- նալոյ զպատճառն և առանց ժամավա- ճառ լինելոյ իսկոյն կատարէ զհրաման տեառն իւրոյ : Ստրուկք են իշխանայ ամենեքին առ հասարակ , և յոյժ ալ- քատք . չգիտեն բնաւ եթէ զիւրդ պարտ

զանուն . քանզի գրեթէ ամենեքեան են առանց գլխարկի :

1 Տոհմ սոցա համարի երկրորդ արքային Իմե- րէթայ , և երբեմն այնքան հզորացան մինչև ակն ածել արքայի իսկ իւրեանց 'ի նոցանէ :

իցէ սերմանել զցորեան , այլ առ հասա- րակ շատանան մարացորենով և զովիով՝ . պահէն անասունս սակաւս , և տեարք անասնոյն չգիտեն եթէ որպէս արժան իցէ բաժանել զիւզն 'ի մաճնոյ . նա մանաւանդ չգիտեն եթէ զինչ խնոցին իցէ , և որ այլ ևս 'ի սոցին սակի :

Աշխանք երկրին կամ իշխանագունք կէսք ծառայեն 'ի դիւանատունս տէ- րութեան Առուսաց և այնու շատանան , և ոմանք պարապեալք յորսս և 'ի զբօ- սանս՝ չգիտեն և ոչ զստորագրութիւն անուան իւրեանց ըստ վաղեմի իշխա- նագանց :

(ԱՒԱՐՏՆ ՅԱՌԱՋԻԿԱՅՍ)



ԱԶԳԱՅԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

Ազգային պայագրութեան սկզբնաորութեա- նը և յառաջանալուն պայմանները 2 :

Ահասարան :— Վրոց պակասութիւնը և տպագրութեան առաջ եկած օգուտ- ները տեսնելով (Յովհաննէս Վարմա- տանենց անունով քահանայ մը)՝ Ահաս- տան անցաւ , և հոն տարուան մը մէջ մեծ ջանքով առանց խնայելու ստրկի և աշխատութեան , երկու տեսակ բոլոր- զիր թափել տուաւ յամի տեառն 1616 : Ատքը Ահաբիսէթ կաթողիկոսին օ- րովը սաղմոսարան մը տպագրեց Ալ- վով քաղաքին մէջ . բայց ինչպէս հա- ւանական կ'երևնայ , տեսնելով որ ջանք- քին համեմատ ընդունելութիւն մը չգը- տաւ իր աշխատութիւնը , փորել տուած գրերուն տձեութեանը համար , ինքն ալ ձեռքը ետ քաշեց . վասն զի առջի տպել տուած գիրքը միանգամայն վեր- ջինը եղաւ : Ստղմոսին ճակատը այս կերպով դրուած է . « Սաղմոս 'ի Վա- ւիթ . տպագրեցաւ սաղմոսարանս 'ի կազմարանն Վարմատանէնց տէր (Յովհաննէսին) . թվին մարգեղութեանէն

1 Սա է մանրատեսակ հունգ գեղնագոյն՝ մե- ծութեամբ կորեկի՝ զոր արկեալ յեռացեալ ջուր ուտեն առանց աղի :

2 Առջի հատուածը տես երես 230 :

տեառն ՌՁՃԺՁ, և Հայոց մեծաց ՌԿԵԼՆ, դեկտեմբեր ամսոյ ժե՛ն», Վրացքը սրբոյն Վարդիանու Վարդապետին Սաղմոսաց վրայ շինած յառաջաբանը դրեր է, վերջը Սաղմոսը, անկէ ետքն ալ Տէր ամենակալ և Հասարակ Խոսարարն աղօթքները: Ընդմէջ ետքը այս յիշատակարանը դրուած է. « Ընկեալ կարող զօրութեամբն Ըտուծոյ կազմեցաւ նոր տպագիրս երկիրն Վրասաց ՚ի քաղաքն Վէլ կոչեցեալ ընդ հովանեաւ ննջման սուրբ աստուածածնին ձեռամբ յօգնամեղ Վարմատանիէնց Յովանէս երիցու. զոր հոգս առեալ մեծաւ աշխատութեամբ և բազում ծախիւք տարի մի բոլոր արուեստաւորաց հետ դատեցայ՝ մինչև զիրն ՚ի գլուխ հանի, և նոր կազմարան սահմանեցի, և վասն փորձի նախ զերզան Վաւթի մարգարէին տպագրեցի ՚ի օգուտ և ՚ի շահ աստուածասէր աղօթողաց մերասեռ ազանց, զոր եթէ հաճելի լիցի կամաց ձերոց՝ տեառն փառք: Ըրդ եղև զրաւ սորին Թուականութեան Հայոց մեծաց ՌԿԵ ամին, ամեանն դեկտեմբերի ժե, և ՚ի ՌՁՃԺՁ ամի, ՚ի հայրապետութեան Վմիածնայ սուրբ յաթողոյն կենդանի նահատակին տեառն տէր Սէլբիսեթ կաթողիկոսի. այլ և Վիլիկեցո զաւառին տէր Յովհաննէս քաջ ըստեանապետի. ՚ի սոցին ժամանակս հանդիպեցաւ տար սորին. այլ և ՚ի Թագաւորութեն քրիստոնէից Վեհ ազգին՝ բարեպաշտ արքային Օրկմոնտին, զոր տէր ինքն անսասան պահեցցե. . . .: Վերը ինչպէս ըսինք, երկու տեսակ բողոքիր է, մէկը քիչ մը խոշոր ու մէկալը անկէ մանր, որ սաղմոսաց խորագիրերն ու գուբզաները նշանակելու կը գործածէ. տպագրութիւնն ալ թէպէտ սխալագիր, բայց ձեռագրաց շատ համեմատ է:

Վե՛նետիկ: — Ինչպէս որ տեսանք, յիւրաւի շատ բարեսէր անձինք հտեւէ եղան տպագրութեան գիւտովը ազգայնոց տգիտութեան ու անկէ առաջ եկած անհամար վնասուցը դարման մը ընելու. բայց աշխատութիւննին այն յաջող ել-

քը չունեցաւ, որուն փափաքովը վառուած այնպիսի դժուարին բանի մը ձեռք զարկեր էին: Իրենց հայրենի երկրէն դուրս սկսուած աշխատութիւն մը գրեթէ իրենցմով կը վերջանար, առանց ազգային կարօտութեան ծարաւը մարելու: Ուստի շատ հնարագէտ մարդիկ ետեւէ եղան, որ այսպիսի հարկաւոր արուեստի մը գիւտը բուն Հայաստանի մէջ մտցընեն. ասոնցմէ մէկն էր Ուրհայեցի Սրապիոն կաթողիկոսը, որ իրեն աշակերտ կեսարացի Վրիգոր անունով վարդապետի մը յանձնեց որ այս բանիս ետեւէ ըլլայ: Բայց ետքը տեսնելով թէ անոր գլուխ հանելու բանը չէ, Յովհաննէս անունով Ընկերացւոյ մը յանձնեց, որ միանգամայն Վատախան լեզուին ալ տեղեակ էր՝ այն բանին գործադրութիւնը: Յովհաննէս՝ գուցէ լուսած ըլլալով թէ Ըբգարեան տառերը՝ իր մահու ընէն ետքը Հռովմ տարուելով հոն մնացին, և յուսալով որ կարենայ գտնել, մէկէնիմէկ Հռովմ անցաւ. բայց զանոնք ձեռք ձգել չկրնալով՝ չորս հինգ տարուան մէջ մեծ աշխատանքով մասնաւոր միջակ և մանր բողոքիր ձուլել տուաւ. անկէ ետքը Վե՛նետիկ անցնելով՝ սաղմոսարան մը տպագրեց յամի 1642, տարի մը վերջն ալ Ս. Երեսնի Շնորհալուոյն Յիսուս որդի ըսուած ստանաւորները: — Սաղմոսարանին սկիզբը այս ձևկաւոր դրուած է. « Սաղմոս ՚ի Վաւթի, կազմեցաւ ՚ի մայրաքաղաքն Վանատիկ՝ ազնականութեամբ ստուական բժշկապետին Յովսէփոս Ըրօմատարիոսին, և Ընդեղոս Պելիսէլոս Ըթենացւոյն. թվին Հայոց մեծաց ՌԿԵ, ՚ի Ընկէ ետքը սաղմոսարանը կը սկսի ու միակարգ կը շարունակէ ինչուան 360 երեսը. վերջն ալ Հասարակ Խոսարարն աղօթքը, ու ետքը գրքին յիշատակարանը: « Պայծառ ընթերցողաց ողջոյն և ծանուցում. . . կատարեցաւ տպագրական սուրբ երգարանս, . . . զոր և ես նուաստ յօգի Յրհաննէս անկերացիս. . . եղայ ՚ի մտի իմոյ զարուեստ սրտագրութեան օգնականութեամբ հոգւոյն սրբոյ: . . . Վիլիկեցի յուսով և

փափաքանօք 'ի Հռոմ քաղաք , և անդ չորս ամ բազում աշխատութեամբ և բազում նեղութեամբ և բազում չար չարանաւք , զոր չէ հնար 'ի գիր արկանել , զոր ծածկագէտ ստեղծաւղն իմ գիտէ : Եւ հանի զսրղապան և զկաղապարքն , զծաղիկքն և զծաղիկագրերն բազում աշխատութեամբ : Եւ յետոյ եկեալ հասա 'ի Սէնտիկ , սկսայ 'ի գործ արկանել : Օր և նկարեցաւ տրպագրական երգարանս Պաւթի 'ի Թուականիս հայոց Ռ.Ղ.Ա. 'ի ժամանակս իշխանաց իշխանի պայծառագոյն Փրանկիսկոսի Լարիցո՛ տուճին , մեծաւորաց հրամանաւ և բրվիլէճով , ձեռամբ իմոյ նուաստ Լնկիւրացի Թարգմանիչ Յոհաննէսին որ Ղիւաննի Սօլինոյ կոչի , 'ի լաւ ընտիր յաւրինակէ Պառնեցւոյ , և յայլ ընտիր վարդապետաց ստուգուած և վկայեած օրինակէ . . . յիշեցէք . . . աղաւթս ձեր զնուաստ Լնկիւրացի Յոհաննէս որ պատճառ եղէ թէ գրին և թէ տպագրելոյն , և զպատուական այրն Յովսէփոյ Լըրուսթաւրիօն որ ոսկով և արծաթով օգնեաց ինձ . . . 'ի տպագրատունն Սալիգազաու , : Արիչ տեղ մըն ալ համառօտիւ կը յիշէ . . . Օ աշխատողս 'ի սմն զնուաստ Լնկիւրացի Յոհաննէս Թարգմանիչս յիշեցէք 'ի տեղ , որ հինգ ամ բազում աշխատութեամբ ինքն մինակ զայս չափս 'ի յայտ և 'ի կատարելութիւն եհան , : Տարագրութեան գիրքը հասարակ ութածալ է . գրերն ալ միջակ՝ Լքգարու փորել տուած գրոցը նմանողութեամբ . իսկ ձագագրերը , ու լուսանցից մէջ ամէն մէկ կանանի սկիզբը գրուած զարդերը՝ ձեռագրաց մէջ գրանուածներուն նմանը շինել տուեր է . տրպագրութիւնն ալ մարուր է , թէպէտ և սխալագրութիւնք մէջը չեն պակսիր :

Յովհաննու Լնկիւրացւոյն երկրորդ տպագրած գիրքն է , լսինք , Շնորհաւոյն Յետոս որդին , որուն մէջ սուրբ հայրատեալին բաց 'ի ուրիշ քերթուածներէն Սխոսանութիւնն ալ տպագրուած է : Իսկ վերջը այսօրիսի յիշատակարան մը գնել տուեր է տպագրողը :

« Փառք . . . որ ետ կարողութիւննուաստ և տառապեալ անձին իմոյ Յոհաննէս անկիւրեցւոյ Թարգմանիչի որ մականունն լսա Ղուովմայեցւոյ Ղիւանի Սօլինոսափ , հասանել 'ի յաւարտ տպագրութեան արհեստիս , զոր բազում ջանիւք և շատ նեղութեամբ տքնեալ և աշխատեալ այս վեց ամ է զոր կախեալ կամ վասն տպագրութեան արհեստիս . . . եղի 'ի մտի զտպագրութեան արհեստն առ 'ի պայծառութիւն ազգիս հայոց : Լըլ և պատճառ աշխատանաց մերոց այս էր , զի Սուրհայեցի Արապիօն կաթուղիկոսն բազում փափաք ունէր վասն տպագրութեան արհեստիս , և ոչ եղև հասու : Եւ ետ պատուէր աշակերտին իւրոյ Տէր Վրիգոր քաջ ընտանապետին Աեսարիոյ՝ լինի եթէ դու կարողանաս տպագրութեան արհեստի , և նայ և ոչ կարողացաւ : Իսկ նա ինձ մեղաւորիս և անարժանիս իբր հարկս 'ի վերայ եղեալ պատուիրէր ինձ հանապաղ թէ լինի դու կարողանաս . վասն զի իմ ծանօթութիւն կայր ընդ ազգիս Փռանկաց եթէ կարդալով և եթէ լեզաւ . այսպէս յանձին կալեալ ջան եղի աղութիւք նորա : Օր և պարգևատուն ամենեցուն Քրիստոս պարգևեաց 'ի ձեռին իմոյ զայսչափն առ 'ի պայծառութիւն մանկանց սրբոյ եկեղեցւոյ 'ի տանս հայոց : . . . Լըրգ եղև կատարումն երգոյս 'ի լաւ և յընտիր օրինակէ՝ բազում քննութեամբ և ստուգաբանելով . . . 'ի վայելուչ և 'ի գեղեցկաշէն կզգիս Սուրհայեցի , և յիշխանութեանն նոյն քաղաքի Փրանկիսկոս Լարիցո գուճին , և մեծամեծաց հրամանաւ և բրվիլէճով . . . 'ի տպագրատունն Սալիգազաու , : Եւ որ ալ տպագրութեան հանգամանքը առջինին նման ըլլալով՝ վրան խորհրդածելը աւելորդ կը սեպենք :

Յովհաննէս Լնկիւրացին բաց 'ի այս երկու գրքերէն որոնք Սէնտիկոյ մէջ տպագրեց , խորհրդատեալս մ'ալ տպագրել տուաւ Հռովմ 1642ն , Լըբաթեան գրերով : Վասն զի ազգերնուս այն ամենահարկաւոր գրոց կարօտութիւնը տեսնելով , Հռովմոյ Տարածման հաւա-

տոյ կամ Փրոփակնտա ըսուած ժողովին առաջարկեց . ծիրանաւորքն ալ Սինէնցիոս Տիքարտոս անունով մէկուն մը յանձնեցին՝ որ աչքէ անցնելով տպագրել տայ : Վրբին ճակատը կրկնալեզու է , հայերէն և լատիներէն . « Վարդեալ սուրբ խորհուրդ պատարագի հայոց . Ordo divinæ Missæ Armenorum, Romæ, Typis et expensis Sacræ Congregationis Propag. Fidei . . . Ետքը երկու վկայագիր կան հայ լեզուով , որոնցմէ առջինն է . « հայոց պատարագի խորհուրդս այս լատին լեզուով գրեալ ինձ յանձնեցին սուրբ ժողովն Վարտինալաց . վասն օգտութե հայոց ազգի . և ես Սինէնցիոս մականուամբ Ռիքարտոս՝ նորին սուրբ ժողովոյն հրամանան առեալ տեսի և սրբագրեցի . կազմեցաւ Ռոմա , լատ . Ռ. Ղ. : Ես Սինէնցիոս Ռիքարտոս , նորին սուրբ ժողովոյն աստուածաբան վարդապետ . . . Իսկ երկրորդ վկայագիրն է . « Ես Յոհաննէս Սուլինա թարգմանիչ հայոց զգիրքս զայս հայի և լատինի լեզուով գրեալ տեսի և կարդացի . և վկայեմ վասն ճշմարտութեան զի ամենեւին հաւասարին միմեանց բարի և ստոյգ . . . Տպագրութեան զիրքը փոքր քառածալ է և երկիջեան , որոնցմէ առաջինն է լատին թարգմանութիւնը և երկրորդը հայ բնագիրը : Իրաւ է որ այս տպագրութեան մէջ ալ փոփոխութիւններ մտցուած են , բայց Ռարսեղ քահանայն սխալ իմացմամբ կամ չգիտութեամբ ուրիշ շատ տարբերութիւններ մէջը մտուց երբոր 1677ին այս գրոց երկրորդ տպագրութիւնը ըրաւ :

Յովհաննու Լնկիւրացւոյն գրերը կ'երևնայ թէ իր մահու ընէն ետքը Յովհաննէս Պովիս անունով Սենտիէցի տպագրապետի մը անցեր են . վասն զի « Ինչպէս որդի գրոց առջի տպագրութեանէն տասնըթեթ տարի ետքը՝ նոյն գրելով դարձեալ տպագրեց Պովիս , գրեթէ նոյն զբքով և նոյն պատկերներով : Իր յիշատակարանին քաղուածէն ընթերցողք զիւրաւ կրնան իմանալ այս տպագրութեան պատճառը « Որ

ետ նուաստ և տառապեալ անձին իմոյ Ղուան Պաղիսդա որ մականուամբ աւսի Պովիս , որ եմ ազգաւ լաղինացի ՚ի գեղեցկաշէն մայրաքաղաքէն Սանատիկոյ , զոր բազում ջանիւք և աշխատանօք հազիւ կարացի ՚ի յանկ հանել զտպագրութեան արուեստս . . . Եզի ՚ի մտի զտպագրութեան արուեստն առ ՚ի պայծառութիւն ազգին հայոց . այլ և պատճառ աշխատանաց մերոց այս էր , որ բազում ժամանակաւ յառաջ ունէի սէր և բարեկամութիւն հետ ազգին հայոց . և յարածամ կայի տեսանել զըբեղաշուք իշխանն հայոց Խոճայ Սափրազն . զոր ոչ կարացի հասանել ցանկութեանս իմոյ , զոր փոխեալ է առ Լստուած , և զնորահաս որդին իւր զԽոճայ Սափրանն . . . ինչորեմ անմեղադիր լինել սակս անյարմարութեան , քանզի ամենեւին ոչ գիտէի լեզու հայոց և կամ զիր . և ոչ տեսեալ ՚ի վարպետաց զայս տպագրութեան արուեստն , ըստ պարզեւելոյն սմա ՚ի հոգւոյն սրբոյ այսքան յայտ ածեալ երևեցուցի վասն օգտութեան ազգին հայոց , զոր և հասի յաւարտ . . . ՚ի լաւ և յընտիր օրինակէ բազում քննութեամբ և ստուգաբանելով . . . ՚ի վայելուչ և ՚ի գեղեցկաշէն կղզիս Սանատիկոյ , և յիշխանութեաննոյն քաղաքի Տօմէնիկօ Քոնթարինի դուճի . . . Կատարեցաւ զիրք երկու՝ նախ Յիսուս որդի և ապա Սաղմիս , ՚ի տպագրատուն Պովիսին . . . Ինչպէս որ ըսինք , Յովհաննու Լնկիւրացւոյն գաղափարներն են՝ Պովիսին գործածած հայ տառերը . և իրմէ ետքն ալ , ինչպէս հաւանական կ'երևնայ , նոյն տառերը Չուղայեցի Խոճայ Սափրատին ձեռքը անցեր են , որուն ըրած տպագրութեանցը վրայ յաջորդ հաստուածով պիտի խօսինք :

Իրմէ ետքը Ռիքայել Պարսոն անունով Սենտիէցի ուրիշ տպագրապետ մը , չենք գիտեր ինչ բանէ յորդորուելով , մասնաւոր գիր փորել տուաւ հայերենի համար , ու 1680ին ինչուան 1690 տասը տարուան միջոցի մէջ քանի մը հայագիր տպագրութիւններ ընծայեց ,

և նախ Մէտարանի առջի տպագրութիւնը ինքը ըրաւ յամի 1680, որուն տպագրութեան զիրքը փոքր ութածալ է, գիրն ալ մանր ու տձև : Գլխին վերջը այս յիշատակարանը դրուած է .

“Մշարտեալ կատարեցաք յամի տեառն 1680 և ըստ Հայոց ՌՃԻԹ, յամնեանն օգոստոսի 'ի Սէնետիկ քաղաքի, 'ի վեհապետութեան եկեղեցւոյն Վրիստոսի Լննօչէնցիոսի տասներորդի, և 'ի հայրապետութեան տեառն Յակօբայ սրբազանի կաթողիկոսին Հայկազունեաց” : Ետքը 1683^ն ուրիշ երկրորդ տպագրութիւն մ'ալ ըրաւ աւետարանի, միջակ գրերով ու երկիջեան փոքր քառածալ դրքով : Ետքը առջինին վրայ ունեցած կատարելութիւնը այն էր որ գրքին ճակտէն ետքը անմիջապէս Եւսեբիոսի առ Վարպիանոս թուղթը դրնել տուեր է, իբրև նախադրութիւն մը աւետարանաց, ետքն ալ աւետարանաց համաձայնութիւնները որ համաբարբառ կ'ըսուին : Մէտարանէն ետքն ալ այս համառօտ յիշատակարանը կայ .

“Մշարտեցաւ տպագրութիւն վայելչաւ տիպ սրբոյ աւետարանիս 'ի լաւ և յընտիր օրինակէ, յամի մարդեղութեան տեառն ՌՈՁԶ, և 'ի թուաբերութեանն Հայոց ՌՃԼԵ 'ի ԺԴ մայիսի ամսոյն 'ի Սէնետիկ քաղաքի . բազում երկամբք և աշխատանք, վասն ոչ Կտանելոյ ըզհամաձայնութիւն համաբարբառիցն' 'ի պատճառս անհոգութեան գրչացն . . . զի մինչև ցայժմ համաբարբառիւք աւետարանն ոչ էր տպեցեալ երբէք՝ վասն դժուարութեան զանազանից թուոցն” : — Ետքն տարին որ աւետարանին առջի տպագրութիւնը ըրաւ Պառայօն, Հայելի ճշմարտութեան ըսուած գրքոյ կ'ալ հրատարակեց, փոքր ութածալ դրքով և միջակագիր անպիտան տպագրութիւն : Ետքը գրքոյ կ'ալ հրատարակեց, փոքր ութածալ դրքով և միջակագիր անպիտան տպագրութիւն : 1681^ն ժամագրոց համառօտութիւն մը տպագրեց, յաջորդ տարին ալ սաղմոս մը Ռսկանայ տպագ-

րածին համեմատ : — 1683^ն Ռաբանան ըսուած աղօթագրոց առաջին տպագրութիւնը ըրաւ, զորն որ լատին լեզուէ թարգմանած է Ստեփանոս լեհացի ըսուած բազմարդիւն և աշխատասէր վարդապետը : — Ետքն տարին Վրաբայն ծաղիկ զօրութեանց ըսուած հոգևոր գրոց երկրորդ տպագրութիւնը ըրաւ . վասն զի առջինը տասը տարի առաջ Փրոփականտայի տպարանէն ելած էր : — 1690^ն ալ իր տպագրութեանցը վերջինը, այսինքն Վարպիանոսի գիրք մը ու խորհրդատեսուր :

(ՄՆԱՅԱՆՈՒ ՌԻՐԻՇ ԱՆԳԱՄ)

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ
ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

Օարձանալի պարարտութեան :

Երկրորդ, Պուսէնկոյի և Տիւմայի ուսումնական երկասիրութիւնները ցուցցին թէ բուսոյ երկրէս առած սննդական նիւթը համեմատաբար մթնոլորտէն առածէն յանհունս նուազ է :

Հեղուկ պարարտութեան հնարողները, որ են Տիւսոյ գաղղիացիները, ասկէց հետեցուցին թէ չէ հողոյն այլ սերման պէտք է պարարտութիւն տալ որպէս զի ծլին :

Ուրեմն ցանելու սերմը պէտք է նախ այնպիսի պարարտացուցիչ նիւթի մը մէջ ձգել որ անոր ծլիլը երազէ, շուտով տերև ու արմատ արձակել տայ, որով նորաբոյս տունկը, բաց 'ի մշակութեան ծախքը զգալապէս նուազելէն, դիւրակրնայ մթնոլորտին մէջ ցրուած սննդաբար տարերքները ծծել ու արագ արագ աճիլ ու առատ պտուղ տալ :

Տիւսոյք այս մտքով լուծեցին այն երևելի առաջարկութիւնը որ հմուտ երկրագործաց մեծ մտածման նիւթ է :

1840^ն Վաղղիոյ արուեստից հանդէսին մէջ դրուած զարիի ու ցորենի ծղօտներն ու հասկերը, որ Տիւսոյք ա-